Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԾՐԱԳԻՐ

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի նորոգութեան Ցանձնաժողովը յայտարարում է մրցանակ (կոնկուրս)՝ կազմելու նորոգութեան նախագծեր այն ծրագրով, որ մշակել է Թիֆլիսում բաղկացած Մասնաժողովը։

Անկախ երեք հրաւիրուած ճարտարապետներից, որոնց իւրաքանչիւրին տրւում է 500-ական ռուբլի վարձատրութիւն, հրաւիրւում և թոյլատրւում է մասնակցել մրցանակին նաև բոլոր այլ ճարտարապետներին, թէ տեղական և թէ այլ քաղաքների։

Ցիշեալ կոնկուրսին—մրցանակին մասնակցելու ցանկութիւն ունեցող անձինք առաջնորդուելու համար՝ բացի մրցանակի սոյն պայմաններից՝ ստանում են իսկականից վիմագրութեամբ հանուած 9 թերթ գծած նկարներ, սաժէնին մի դիւյմ մասշտաբով։ Մրցակիցները նորոգութեան յատակագիծը կազմելիս պէտք է առաջնորդուեն հետևեալ պարտաւորեցուցիչ պայմաններով.

1. Վերականգնել Տաճարի շրջապատի նախկին ցոկոլը։ (Նկարներին կցւում է Տաճարի հետ ցոկոլի լուսանկարը)։

2. Թողնել զանգակատունն ամբողջութեամբ առանց փոփոխութեան։

3. Թողնել անփոփոխ կողքերի երկու մուտքը։

4. Պահպանել անփոփոխ կողքերի երկու ապսիդների և գլխաւոր սեղանի երեք գմբէթը, իսկ կենդրոնի գմբէթի նկատմամբ թոյլատրւում է փոփոխել միայն նրա տանիքի թեքութիւնը։

5. Ոչնչացնել կողքի գմբէթների շուրջը իբրև ամրոց շինած շրջապարիսպը և վերականգնել ըստ հնարաւորութեան պսակող կարնիզները և ֆրոնտոնն իրենց նախկին դիրքով, որոնց մնացորդները ցոյց են տրւած գծած յատակագծի վրայ։

6. Պէտք է՞ վերցնել արևելեան կողմի շինութիւնը

(թանգարանը), որովհետև անհամապատասխան է տաճարի ընդհանուր ձևին և ոճին։ (Թանգարանի սահմանները յատակագծի վրայ նշանակված են №№ գծերով)։

7. Ի նկատի առնելով, որ գլխաւոր սեղանի երկու կողմի հին խորանները չեն կարող լիովին բաւարարել հանդիսաւոր օրերի և Տաճարի կարիքների ներկայ պահանջներին, ուստի անհրաժեշտ է ծրագրել այդ նպատակի համար հին խորանին կից մի նոր լրացուցիչ շինութիւն արևելեան կողմից, Տաճարի ոճով, որ բաղկացած լինի երեք բաժանմունքից, աւանդատուն 20 քառակուսի սաժէն տարածութեամբ և մասանց խորան՝ 5 քառակուսի սաժէն։

8. Հիւսիսային խորանը պէտք է ունենայ Տաճարի յատակից 7 աստիճանի բարձրութիւն, իւրաքանչիւր աստիճանը 5 վերշոկ։ Հարաւային սեղանի աստիճանների թիւը և բարձրութիւնը մնում են անփոփոխ։

9. Յատակագիծը պէտք է ունենայ 4 ֆասադների պատկեր, լայնութեան ու երկարութեան կտրուածքներ, նոր յաւելեալ շինութեան կտրուածք և լրացուցիչ պարզաբանող նկարներ (чертежъ), բոլորը պէտք է գծուած լինեն սաժէնին մի դիւյիմ մասշտաբով։ Պարզաբանող գրաւոր բացատրութիւններ պարտաւորիչ չեն, բայց ցանկալի են։

10. Ս. Էջմիածնի վերանորոգութեան յանձնաժողովը համեմատաբար ամենալաւ ծրագրի համար նշանակում է մի պրեմիա 1000 ռուբլի վարձատրութեամբ, սակայն հրաւիրուած ճարտարապետները, պրեմիայի արժանանալու դէպքում, կըստանան միայն 500 ռուբլի։

Բացի դրանից ժիւրիին վերապահւում է իրաւունք յանձնարարել Էջմիածնի յանձնաժողովին ձեռք բերելու պրէմիայի չարժանացած ծրագիրներից մէկը 500 ռուբլի վարձատրութեամբ։

11. Պրէմիայի ստացումը իրաւունք չի տալիս հեղինակին աշխատանքի վրայ հսկելու, այլ հսկողի ընտրութիւնը ամբողջապէս կախուած է Ս. Էջմիածնի Տաճարի վերանորոգութեան յանձնաժողովի և Թիֆլիսի մասնախմբի փոխադարձ համաձայնութիւնից։

12. Յատակագիծը պէտք է ներկայացնեն գրպանների մէջ և ոչ ծալած դիրքով, սրանց կցուած կը լինեն փակ ծրարներ, ուր պէտք է նշանակուած լինեն հեղինակի անունը, հայրանունը և ազգանունը, նոյնպէս և նրա մանրամասն հասցէն։

13. Յատակագծերը ներկայացնելու համար տրւում է հինգ ամիս ժամանակամիջոց կոնկուրսը յայտարարելու օրից հաշուելով. Ժամանակամիջոցը լրացած օրուայ ժամը 12-ից յետոյ տեղական ճարտարապետներից այլևս չէ ընդունւում յատակագիծ, իսկ այլ քաղաքներից պոստին յանձնելու վերջնական ժամանակամիջոցը համարւում է նոյն օրը (այսինքն փետր. 1) և իբրև ապացոյց պէտք է այդ օրուայ թուով պոստից ստացած ապահովագիրը առանձին նամակով ուղարկեն։

14. Յատակագիծը պէտք է ուղղեն հետևեալ հասցէով.—Թիֆլիս, Էջմիածնի Տաճարի Նորոգութեան յանձնաժողովին, գեղեցիկ արուեստները հովանաւորող կովկասեան ընկերութեան, Դաւիդովսկայա փողոց № 2։

15. Այն յատակագծերը, որոնք համապատասխան չեն լինիլ կոնկուրսի վերոյիշեալ պայմաններից որ և է մէկին կամ նշանակեալ ժամանակին չեն ներկայացուի, բոլորովի չեն ենթարկուիլ քննութեան։

16. Յատակագիծը Թիֆլիսում կը դրուի ի տես հասարակութեան միայն պրէմիայի արժանանալուց յետոյ։

17. Մրցանակաբաշխութեան որոշումից յետոյ միւս բոլոր յատակագծերը, բացի մրցանակի արժանացածից, գնելու համար յանձնարարուած (եթէ գտնուեն) և երեք ճարտարապետների պատուիրուած յատակագծերը (որոնք բոլորը կազմում են Էջմիածնի սեփականութիւն) միւսների տէրերը պէտք է յետ վերցնեն ոչ ուշ քան մի ամիս, որից յետոյ չվերցրած յատակագծերը դառնում են Էջմիածնի յանձնաժողովի սեփականութիւն։

18. Կոնկուրսի նախագծի մուտ լինելու նկատմամբ ծագած հարցերը պէտք է կոնկուրսը յայտարարելուց ոչ ուշ քան մինչև 20 օրը ուղղեն վերոյիշեալ հասցէով (տես.

14 կէտ), իսկ հարցերին տրուած պատասխանները կը տրուին կովկասեան տեղական թերթերում և Պետերբուրգում հրատարակուող «Зодчій» թերթում 2 ամսուայ ընթացքում կոնկուրսը յայտարարուելուց սկսած։ Մրցանակի հետևանքի մասին կը հրատարակուի նաև նոյն թերթերում։

19. Ժիւրին հրաւիրուում է Թիֆլիս հետևեալ կազմով.

1) Մեսրոբ եպիսկոպոս, 2) Գարեգին վարդապետ, 3) Բիլ Ֆէլդ, 4) Բաբանով, 5) Տէր Միքէլեան, 6) Ռոտինով, 7) Թադէոսեան, 8) Ֆէթվաճեան, և 9) Գրինևսկի։

Նորին Սրբութիւնը հաստատեց Ս. Էջմիածնի Տաճարի Վերանորոգութեան մրցանակի այս ծրագիրը Հայրապետական Կոնդակով 1910 թ. Յուլ. 31, թիւ. 1775։

Դիւանապետ ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ